ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե- 8862

«21» հոկտեմբերի 2021թ.

ԴԱՎԻԹ ՔՈՉԱՐՅԱՆ Ա/Ձ-ԻՆ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. ԴԱՎԻԹ ՔՈՉԱՐՅԱՆ Ա/Ձ

-էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1)՝ ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը նշված չէ՝ նշված է մասնակցի հայերեն անվանումը:

2. «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) հավելվածին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 22-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/23» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788